

ՎԵՐԱԳԱՐՁԻ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ara Krikorian. Christapor Mikaëlian et le sultan turc. Le grand defi. Biographie. "Edipol", Maisons-Alfort (France), 2014, 302 p.*



Արա Գրիգորյանի երկար տարիների համառ ու տքնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացող **“Christapor Mikaëlian et le sultan turc. Le grand defi”** մենագրությունն¹ իր գրավիչ շարադրանքով և արդիական ձևավորմամբ առաջին անգամ ֆրանսիական հասարակությանն է ներկայացնում Քրիստափոր Միքայելյանի կյանքի ու գործունեության ամբողջական պատկերը:

Անշուշտ, դեռևս ՀՅԳ հիմնադրի ու առաջնորդի ողբերգական մահից հետո նրա գործընկեր ու բարեկամ Պիեռ Քիյառը «Պրո Արմենիայի» էջերում հասցրել է ֆրանսիացի ընթերցողին մատուցել «notre Christapor»-ի կերպարը, բայց որպես ծավալուն ու ամբողջական հետազոտության փորձ, Արա Գրիգորյանի աշխատությունը իրադարձություն է ոչ միայն Ֆրանսիայի, այլև ողջ Սփյուռքի կյանքում:

Գրախոսվող մենագրության իրական արժանիքներն ամեննին էլ նեղակադեմիական չափորոշիչների մեջ չեն, այլ նրա միջոցով մի կողմից՝ Քրիստափորի կերպարը ֆրանսիական հասարակությանը ներկայացնելու և մյուս կողմից՝ դեպի հարազատ արմատները դիմաշրջվելու նպատակադրումի առկայության: Հենց սկզբից նշենք, որ այս երկու նպատակներն էլ **իրականություն են դարձել**. Երկար տարիներ Լիբանանի ու Հայաստանի գրադարաններում և արխիվներում իր պրպտումների արդյունքում ֆրանսահայ Արա Գրիգորյանը ոչ միայն ինքն է վերադարձել սեփական ինքնության ակունքներին, այլև հեղափոխությունների բնօրրան Ֆրանսիայի ընթերցող հասարակության համար բացահայտել է մարդու իրավունք-



*Ընդունվել է տպագրության 24.12.2014:

¹ Մենագրության հետ միասին հեղինակը հրատարակել է նրանում տեղ գտած իրադարձությունների ժամանակագրության, անձնանունների, տեղանունների, և օգտագործված մամուլի օրգանների վերաբերյալ մանրամասն ծանոթագրություններ պարունակող մի լրացուցիչ հատոր – **«Christapor Mikaëlian et son temps. Repères. 'Edipol', Maisons-Alfort (France), 2014, 166 p.**

ներից ամենակարևորի՝ **ազատության** համար հայ ժողովրդի 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի հերոսական ու անհավասար պայքարի առաջնորդի առինքնող կերպարը:

Ուստի՝ իր ողջ գիտակից կյանքը ազատության գաղափարը սեփական հայրենիքում արմատավորելու գործին նվիրած Քրիստափոր Միքայելյանի կերպարը, հաղթահարելով տարիների հեռավորությունն ու աշխարհագրական միջավայրերի խոչընդոտները, վերադարձել է իր համամարդկային գաղափարների ակունքներին՝ բազմելով ժամանակակից Ֆրանսիայի ազատության ու մարդու իրավունքների սկզբունքները կերտած՝ մարտների, ռոբեսպիերների ու ժորեսների կողքին: Արդյունքում՝ Արա Գրիգորյանը ստեղծել է մի աշխատություն, որն իր տեսակով խորհրդանշում է Ֆրանսիայում ապրող հայի՝ դեպի սեփական արմատները դիմաշրջվելու համառ ջանքերը և միաժամանակ ազատության գաղափարի մեծ նահատակներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի կերպարի լիարժեք վերականգնումը ազատության երկիր Ֆրանսիայի հիշողության տիրույթում: Սա իր խորքային էության մեջ **կրկնակի վերադարձ է դեպի Հայրենիք և Ազատություն** և որպես այդպիսին՝ **Վերադարձի մեծ խորհուրդ**:

Արա Գրիգորյանի վարժ գրչի միջոցով Քրիստափորի կերպարը մատուցվել է Ֆրանսիացի ընթերցողի ճաշակին և պատկերացումներին համահունչ ժանրային ու բովանդակային լուծումներով: Դրանք հեղինակից պահանջում էին հիմնվել հետազոտության կենսագրական մեթոդի ընձեռած հնարավորությունների վրա և շարադրանքը սկսել Ֆրանսիայում ծնված, Մեծ եղեռնի արհավիրքից փրկված ծնողների գավակի ինքնության որոնումներից, որոնցում ժամանակի ընթացքում իր կայուն տեղն է գրավել Քրիստափոր Միքայելյանի կերպարը: Այդ գործընթացի հատունացման որոշակի հանգրվանում՝ 2005 թվականին, դաշնակցական Արա Գրիգորյանին ՀՅԴ Ավֆորվիլի «Սարգիս Մինասյան» կառույցը հանձնարարել է Քրիստափորի կյանքի ու գործունեության դրվագների ուսումնասիրության խնդիրը, որը սկզբում Ֆրանսիայում բնակվող մասնագետների և ապա Սփյուռքի ու հայրենի գիտնականների խորհուրդներով ու աջակցությամբ, ժամանակի ընթացքում դարձել է հեղինակի կյանքի գործը:

Արա Գրիգորյանի մենագրության շարադրանքը հեղինակի անձնական ու հետազոտական հետաքրքրությունների ձևավորման գործընթացի նկարագրությունից սահուն անցում է կատարում դեպի իր հերոսի մանկության ու պատանեկության շրջանը՝ իբրև հիմք ընդունելով Քրիստափոր Միքայելյանի կյանքի ու գործունեության ժամանակագրության քառանդամ բաժանումը. ա) մանկության տարիները հարազատ Վերին Ագուլիսում, բ) ուսումնառության շրջանը Թիֆլիսում (1876-1884), գործունեությունը մինչև ՀՅԴ ձևավորումը (1885-1890) և վերջապես՝ դ) Քրիստափորի՝ իբրև ՀՅԴ հիմնադրի ու առաջնորդի 15-ամյա պայքարի և նահատակության պատմությունը:

Մանրակրկիտ ու բարեխիղճ շարադրանքի միջոցով հեղինակը ներկայացնում է հոր կորստյան դառնությունը ճաշակած Քրիստափորի «տխուր մանկության» տարիները հարազատ Վերին Ագուլիսում, որը ժամանակակիցների կողմից արժանացել էր «փոքր Փարիզ» բնորոշմանը: Հեղինակը, օգտվելով Արգամ Ավագյանի աշխատություններից, հարազատորեն պատկերել է հայոց պատմական անցյալի վկայություններով հարուստ Գողթան գավառի՝ 19-րդ դարում դեռևս չաղձատված մշակութային միջավայրը, որտեղ ծնվել է ՀՅԴ ապագա առաջնորդը: Բացահայտվում է նաև հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարներով ու նարողնիկության հեղափոխական պայքարի նպատակներով հագեցած արևելահայերի մշակութային մայրաքաղաքի՝ Թիֆլիսի առինքնող մթնոլորտի ազդեցությունը Քրիստափոր-հեղափոխականի ձևավորման վրա: Մանրակրկիտ շարադրանքի միջոցով ընթերցողին է մատուցվում Մոսկվայում ուսումը շարունակելու համար Քր. Միքայելյանի ձեռնարկած փորձի անհաջողության տխուր

ԳՐԱԽՈՍԻԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԽՈՍԻԹՅՈՒՆՆԵՐ, 2014
ԳՐԱԽՈՍԻԹՅՈՒՆՆԵՐ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԵՆԻՔ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՆԿԱԿԱՎԱԿԱՆ ԽԱՆՈՒԿ

էջը՝ այն համեմեցելով տվյալ շրջանում նրա ինտելեկտուալ որոնումների առարկան դարձած փիլիսոփայական ու քաղաքագիտական աշխատությունների վերլուծության հետ:

Առանձին գլխով՝ «Օտտոմանյան կայսրությունը և Աբդուլ Համիդը»², ներկայացվում է թուրքական բռնապետության անցած համառոտ ուղին, նրա տիրապետության տակ հայտնված արևմտահայության վիճակը մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ու Հայկական հարցի միջազգայնացումը: Սրանով ուսումնասիրողը հետազոտական տարածք է ներբերում այն հիմնախնդիրը, որի լուծմանն իր կյանքն էր նվիրելու Ագուլիսից Թիֆլիս տեղափոխված Քր. Միքայելյանը:

Ներկայացնելով ՀՅ Դաշնակցության Հիմնադիր ժողովների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մանրամասները, հեղինակը թեև նոր սկզբնաղբյուրներ չի դնում գիտական շրջանառության մեջ, բայց կարողանում է արդեն իսկ հրապարակվածների մեջ հայտնաբերել այնպիսի փաստեր ու դրվագներ, որոնց վրա ուշադրություն չէին դարձրել նախորդ ուսումնասիրողները: Սա պատմագիտության յուրահատկություններից մեկն է, երբ ընտրված հետազոտական դիտանկյունը թույլ է տալիս նոր քննության ուսպնյակի մեջ ներառել այնպիսի իրողություններ, որոնք անտեսվել կամ չեն նկատվել նախորդ ուսումնասիրողների կողմից: Դրանց շարքում, մանավանդ ֆրանսիական միջավայրում մեծ հետաքրքրությամբ կարող է ընթերցվել «Քրիստափորը և Ժենյան» գլուխը, որում ներկայացվում են Քրիստափորի կնոջ՝ հեղափոխական-նարողիկ Եվգենյա Լավրուսևիչ-Բաբուշկինայի կյանքի ուշագրավ դրվագները, ծանոթությունը Քրիստափորի հետ և նրանց սիրո ծնունդ Ռուբենի կենսագրության մանրամասները:

Միջանձնային հարաբերությունները պատմության լայն կտավի հետ զուգորդելու համար հեղինակը լայնորեն օգտագործել է ժամանակակիցների հուշերում առկա այն հատվածները, որոնցում պահպանվել են տվյալ դարաշրջանին բնորոշ հարցերի բովանդակության երկխոսային քննարկումների դրվագները, որոնց վրա մինչ օրս գրեթե ուշադրություն չի դարձրել մեր պատմագիտությունը: Տարտան անցյալականության նման պարզունակ դրսևորումների արժեքը ժամանակի ոգու և միջանձնային հարաբերությունների հարազատ արտացոլման մեջ է, ինչը թույլ է տալիս բացահայտել պատմական դեմքերի հոգեբանության նրբերանգները:

Շարադրանքի նման ընթացքը որոշ չափով խախտվում է ութերորդ գլխում, ուր Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Առաջին քայլերի» քննությանը և դրանց համատեքստում նորաստեղծ «Կենտրոնի» կամ «Կենտրոնական վարչություն» գործունեությանը զուգահեռ, խոսք է բացվում «Կուկունյանի արկածախնդրության» մասին (էջ 131), որը 1890 թ. սեպտեմբերի վերջերին արդեն ողբերգական ավարտ էր ունեցել: Մինչդեռ Ս. Կուկունյանի արշավանքը 1890 թ. ամռանը բնորոշ ոգևորության մթնոլորտի ծնունդն էր, ուստի նրա պատմությունը ճիշտ կլիներ շարադրել մի փոքր ավելի վաղ: Թերի է նաև Քրիստափոր Միքայելյանի 1893-1897 թթ. գործունեության պատմության շարադրանքը: Քանզի մինչև Բաբվում տեղի ունեցած 1895 թ. հոկտեմբերյան ձերբակալությունը նրա կենսագրության մեջ առկա են բազմաթիվ այլ ուշագրավ դրվագներ, որոնց արձագանքները տեղ են գտել ՀՅԴ հիմնադիրների նամակագրության մեջ:

Ավելի մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում ՀՅԴ երկրորդ Ընդհանուր ժողովին վերաբերող 12-րդ գլուխը, մանավանդ՝ այստեղ Քր. Միքայելյանի հասցեին հնչեցված քննադատությունների բովանդակությունը ներառող բաժինը: Այդ գործում ակտիվ էին հատկապես երկու ավեքպոլցի դաշնակցականները՝ Գարեգին Խաժակն ու Վարդ-Պատրիկյանը և Հովհաննես Յուսուֆյանը (Վահանյան): Բացահայտվում են նաև «Շարժումի» մեջ նույն Գարեգին Խաժակի տպագրած «Մի-

2 Բովանդակության մեջ այս բաժինը, թերևս թյուրիմացաբար, մատուցվել է «Օտտոմանյան կայսրությունը 19-րդ դարում» վերտառությամբ:

րող հեղափոխականները» հողվածով Քրիստափորին հասցված բարոյական հարվածի և վերջինիս պատասխանի մանրամասները:

Մի փոքր ավելի հանգամանակից է «Պրո Արմենիայի» հիմնադրման և ընդհանրապես՝ ՀՅԴ եվրոպական քարոզչության սկզբնավորման պատմության շարադրանքը: Պատճառն ակնհայտ է. Քրիստափորի գործունեությունը, տեղափոխվելով նոր միջավայր, հայտնվել էր իր արժեհամակարգը կիսող եվրոպական գործիչների հետ գաղափարաքաղաքական սերտ շփումների մեջ: Քրիստափորը ժորեսների ու բեբելների շրջապատում հանդես էր գալիս ոչ միայն որպես ժամանակակից ըմբռնումով՝ հայկական լոբբիզմի սկզբնավորողներից ու նրա հետագա բեղմնավոր գործունեության սկզբունքները մշակողներից մեկը: Նա նաև այդ նույն գաղափարներն ու գործը ավելի բարդ ու վտանգաշատ արևելյան միջավայրում տարածող առաջին Առաքյալներից մեկն էր: Անշուշտ, Քրիստափորին բախտ չվիճակվեց դառնալու ՀՅԴ սոցիալիստական քաղաքականության հիմքերը դրած նման նախաքայլերի անմիջական իրականացնողը, սակայն իր ողբերգական մահվանից հետո այդ գործը շարունակած Ռոստոմի և կուսակցության մյուս գործիչների համար ստեղծեց անհրաժեշտ նախադրյալներ ու պայմաններ:

Աշխատության վերջին բաժինները նվիրված են «Փոթորիկի» գործի կազմակերպման և Բուլղարիայում Քրիստափորի կյանքի ողբերգական ավարտի մանրամասների ներկայացմանը:

Շնորհավորելով հեղինակին իր տարիների բեղմնավոր աշխատանքի հաջող ավատի առիթով՝ միաժամանակ չենք կարող նրա ուշադրությունը չհրավիրել մենագրության մեջ տեղ գտած մի շարք թերությունների վրա: **Նախ**՝ անթույլատրելի է նման ծավալի և ընդգրկման մենագրության մեջ անտեսել Քրիստափոր-հեղափոխականի գաղափարական ժառանգության խտացումը հանդիսացող նրա աշխատություններն ու հողվածները, ինչպես նաև բազմաթիվ նամակների հարուստ բովանդակությունը: Դրանք թեև վաղուց արդեն հրատարակված են, բայց այդպես էլ անհրաժեշտ խորությամբ չեն հետազոտվել ուսումնասիրողների կողմից:

Երկրորդ՝ աշխատության մեջ տեղ են գտել նաև տեղանունների ու անձնանունների բազմաթիվ աղավաղումներ, մանավանդ՝ ռուսերենից անվարժ թարգմանության, ինչպես նաև արևելահայ իրականությանը վերաբերող հասկացությունների ու անձնանունների՝ արևմտահայերեն փոխարկումները մեխանիկորեն ֆրանսերենի վերածելու հետևանքով:

Գ. Խ.

GREAT MYSTERY OF THE RETURN

Ara Krikorian. Christapor Mikaëlian et le sultan turc. Le grand defi. Biographie. “Edipol”, Maisons-Alfort (France), 2014, 302 p.

ВЕЛИКОЕ ТАИНСТВО ВОЗВРАЩЕНИЯ

Ara Krikorian. Christapor Mikaëlian et le sultan turc. Le grand defi. Biographie. “Edipol”, Maisons-Alfort (France), 2014, 302 p.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Զ (ԺԲ) րարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014
ՎԷՆ համահայկական հանդես